



թ. 7. ժողովածոյ տպ. 1710ի, էջ 145.

ալ հրատարակութեան մանրամասնութիւնները՝ որոնց մէջ բաւական նկատելի կէտեր կան ցարդ անտես առնուած. այդ մասին գեղարուեստական ծրագրեալ ուրիշ աշխատութեան մը մէջ առիթ պիտի ունենամ Ռսկանի Աստուածաշունչին մասին երկար խօսելու և պրպտելու:

Օրմանեան՝ Ռսկանի Աստուածաշունչին մասին խօսելէ վերջ կ'ըսէ. «Իրմէ առաջ կատարուած բոլոր տպագրութիւններէն գերազանց գործ մըն է, տառերը ընտիր ձեւով, այժմ ալ իբր տիպար սեպուելու արժանի, պատկերներով և զարդերով ճոխացած, որոնք ամէնքը կրնան պատրւ բերել Ռսկանի արուեստագիտական հան-

ճարին՝ 1»: Առ այժմ միայն պատկերները կը հետաքրքրեն մեզ, որուն համար Սարուխան կ'ըսէ «նա շինել տուեց նաև պատկերներ Ս. Գրքից առնուած, յատկապէս Աստուածաշունչի համար»:

Սակայն մենք պիտի տեսնենք որ Ռսկան իր Աստուածաշունչին համար ձեռք բերաւ արդէն պատրաստ պատկերներ, զորս գործածեց իր միւս հրատարակութեանց մէջ ալ՝ որպէս իր Ամստերտամ հրատարակած Շարակնոցին մէջ: Այս փայտափորագրեալ պատկերները արդէն հրատարակուած էին և գործածուած Հոլանտերէն Biblia Sacraի (Աստուածաշունչ) տպագրութեան մէջ, կատարուած T'Antwerpen by IAN VAN MOERENTORF EN NV HERDRUCKT by PIETER IACOPSZ. 1657^s, ըսել է Ռսկանի հրատարակածէն 11 տարի առաջ:

Որոշ է թէ Ռսկանի նիւթական միջոցները իրեն թոյլ չպիտի տային այսքան բազմաթիւ փորագրուած պատկերներ ունենալ՝ զանոնք ուղակի իրեն համար պատրաստել տալով, ուստի այդ բազմաջան վրդ.ը յաջորդ միջոցին դիմեց, այսինքն գնեց արդէն գործածուած փորագրութիւններ: Թէեւ անոնք գործածուած էին նախապէս Հոլանտերէն հրատարակութեան մը համար և առ այդ ալ պատրաստուած, որովհետեւ պատկերներուն մեծ մասին մէջ կան լատին A. B. C. D. եւն տառերը, Հոլանտերէն բնագրին մէջ պատկերներուն իմաստը դիւրացնելու համար. սակայն հայ հրատարակիչը նկատի չառաւ այդ փոքրիկ անպատեհութիւնը, և այդ գրաթիւերը չօգտագործեց իր հրատարակութեան մէջ:

1. Ազգապատում, Բ. հատոր էջ 2240.
2. Հոլլանդական և Հայերէն - Հանդ. ամս. 1927, էջ 180.
3. Համեմատելով տեսայ թէ այս հատորին մէջ բուն իսկ գործածուած նկարաթիւերն (ըլիշէ) են որ գործածած է Ռսկան վրդ. 1666ի Ս. Գրքից հրատարակութեան մէջ, Համեմատութեան դիւրութեան համար հոս կու տամ համառոտ ցանկ մը.

Աստ հր. պատ. թ.	3	Ռսկան, էջ	431	Հոլանտ. (1657ի) հր. Բ. հատոր Բ. մաս էջ	5.	Ա. սիւն.
» » » »	10	» »	472	» » » » » » » »	10.	Բ. »
» » » »	5	» »	483	» » » » » » » »	8.	Ա. »
» » » »	1	» »	449	» » » » » » » »	33.	Բ. »
» » » »	18	» »	484	» » » » » » » »	38.	Ա. »